ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 12 — ԿԻՐԱԿԻ 2 ՅՈՒՆԻՍԻ 1891

Ներկայ 1891 թ. Մարտից մինչև 1892 Յունվարի 1-ը բաժանորդագինն է ՈՒԹ ռուբլի կամ 30 ֆրանկ։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը՝ Թիֆլիզ Վէլիամինովսկի փողոց, քաղաքային Խորհրդատան հանդէպ։ Ուրիշ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, Редакція Армянскаго Иллюстрированнаго журнала „АРДЗАГАНКЪ“. Կրատատմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien illustré „A R D Z A G A N G“

Առանձին համարի գինը 30 կ. — Յայտարարութեան բաւին 4 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։—Փողով Հայոց Թատրոնի մասին։ Յակոբ Տիգրանեան։ Ազնուականների պարագլուխ։ Երմօլովա։ Քաղաքային դուման։ Թղթակցութիւններ՝ Զուլաերից և Ախալցխայից։ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։—Ջ. Խալաթեան, բանաստեղծութիւններ։ ՓԷԼԻԵՏՕՆ։—կարնոյ գաղթը։ ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ։ ՋԱՆԱՋԱՆ։—Տիկին Զելգօն, Ջօն Վեսլէ և տիկին Ուարդի։ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՂՈՎ ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

—

Հայոց թատրոնի չարաբաղդ հարցը սկսել է քիչ մը շատ զբաղեցնել հասարակութեանը։ Անցեալ հինգշաբթի, մայիսի 30-ին, թատրոնական ընկերութիւնը հետաքրքրուողներին հրաւիրել էր Թիֆլիզի ժողովարանի ձմեռային դահլիճը հայոց թատրոնի մասին խորհրդակցելու։ Այդ օրը հաւաքուել էին մօտ 100 մարդ, մեծ մասամբ երիտասարդներ։ Փողովի նախագահ ընտրուեց իշխան Ն. Ամատունի։

Անցեալի մասին մի համառօտ տեղեկութիւն տալուց յետոյ, իշխան Ամատունին առաջարկեց դերասան պ. Պետրոսեանցին կարդալ իր մի գրաւոր առաջարկութիւնը։ Պ. Պետրոսեանցը ցանկանում է առաջիկայ սեզօնին կանոնաւորել թատրոնական գործը հետևեալ պայմաններով։ Պ. Պետրոսեանցը յանձն է առնում կ. Պօլսից բերել երկու շնորհալի դերասանուհիներ և մի դերասան, հրաւիրել նոյնպէս և տեղական ոյժերին և կազմել մի օրինաւոր խումբ մի սեզօնի համար։ Խումբը կը տայ ամսական չոր՝ կամ ամբողջ ձմեռուայ ընթացքում մօտաւորապէս հոգ և երկու ներկայացում։ Այս ձեռնարկութիւնը դլուխ բերելու համար պ. Պետրոսեանցի հաշուով հարկաւոր է 2,500 ր., որից նա կ. Պօլիս գնալու համար այժմ ճանապարհածախք պահանջում է 500 ր., դերասանուհիների հետ պայման կապելիս նրանց վարձ տալու համար 500 ր., իսկ մնացեալ 1,500 ր թողնել հասարակութիւնից ընտրուած մի քանի անձանց մօտ թատրոնի ապագայ ծախքերի համար, յամենայն դէպս այդ 1,500 ր. իրրև ապահովութիւն։

Այդ առաջարկութիւնը կարդացուելուց յետոյ, սկսուեց խորհրդակցութիւն։ Մի քանի անձինք հարց տրեցին թատրոնական Ակումբի մասին, և պահանջեցին, որ այդ մեռած հիմնարկութիւնը իւր ձեռքի տակ ունեցած 2,600 ռ. դրծապրի թատրոնի համար, տալով այդ գումարը պ. Պետրոսեանցին կամ առհասարակ այն անձանց, որ ցանկանում են հայոց բեմը վերականդնեցնել։ Խօսուեց նոյնպէս և այն 800 ռ. մասին, որ պ. Սունդուկեանցը յանձնել է բարեդործական ընկերութեանը իրրև անձեռնմխելի գումար։

Իշխ. Ամատունին, իրրև Ակումբի անդամ, յայտնեց, թէ ներկայ ժողովը իրաւունք չունի այդ Ակումբի փողերի մասին խօսելու, քանի որ այդ փողերը Ակումբին են պատկանում և վերջինս պահում է իւր նպատակի համար։ Բայց չը նայելով իշխանի բողոքին, ներկայ եղողները շարունակեցին խօսել թեր և դէմ Ակումբի մասին։ Հարցը պարզուեց այն ժամանակ, երբ պ. Արգար Յովհաննիսեանը ապացուցանելով Ակումբի մեռեալ դրութիւնը, միևնոյն ժամանակ բացատրեց, որ այդ Ակումբի անդամների երկու կերպ իրաւունք ունին դործածել իրանց գումարը։ Մէկ, որ Ակումբն ինքը յանձն առնէ թատրոնի դործը և նրա ծախքերը, երկրորդ, որ նա եթէ չի կամենում իւր դործութիւնը շարունակել, իւր դրամագլուխը պարտաւոր է յանձնել Ներսիսեան Դպրանոցին, ինչպէս այդ ասուած է կանոնադրութեան մէջ։ Գալով այն 800 ռ. որ դոյացել է պ. Սունդուկեանցի «Ամուսիններ» պիեսի ներկայացումից յետոյ թատրոնական Ակումբի, ինքը պ. Սունդուկեանցը յայտնեց ժողովին, թէ իրաւունք չունի այդ գումարին ձեռք տալ, քանի որ վճռուած է տալ Ակումբին միայն և այն էլ այն ժամանակ, երբ վերջինը կըսկսի գործել։

Փողովը լսելով այս բոլորը, եկաւ այն եզրակացութեան, որ հարկաւոր է գործը սկսել անկախ թէ Ակումբից և թէ այդ չարաբաղդ 800 ռ. գումարից։ Վճռուեց ընդունել պ. Պետրոսեանցի առաջարկութիւնը և անմիջապէս սկսուեց հանդանակութիւն։ Ներկայ եղողներից 35 մարդ ստորագրեցին 650 ռ.։ Միևնոյն ժամանակ, ժողովը ընտրեց երեք մարդ, (պ. պ. Տէր-Նիկողոսեան, Թարխանեան, Յովհան-

նէս Յովհաննիսեան), որ Հանգանակութիւնը շարունակեն և հասցնեն մինչև 2,500 ռուբլու։

***

Անցեալ կիրակի, մայիսի 29-ին կատարուեց վաղամեռ Յակովբ Տիգրանեանցի թաղման հանդէսը։ Առաւօտեան 10 ժամին դագաղը դուրս բերուեց հանգուցեալի բնակարանից և տարուեց Մողնու եկեղեցին։ Յուղարկաւորութեանը ներկայ էին Թիֆլիզի նահանգապետ իշխ. Ղերվաշիձէն, քաղաքագլուխ իշխ. Ն. Արղութեանը, գրականութեան և մամուլի ներկայացուցիչները, քաղաքային վարչութեան անդամները և ծառայողները, դումայի իրաւասութիւններից շատերը և ուրիշ շատ պաշտօնեաներ։ Պատարագից յետոյ Հայր Մուշեղը մի դամբանական ասաց և 1 ժամին դագաղը եկեղեցուց դուրս բերելով տարուեց Խօջի Վանքի գերեզմանատունը և այստեղ 2 ժամին յանձնուեց հողին։ Դագաղի վերայ դրուած էին մի քանի գեղեցիկ պսակներ ի միջի այլոց «Հրատարակչական ընկերութիւնից», Հանգուցեալի պաշտօնակիցներից և «Քաղաքային վարչութեան ծառայողներից։»

***

Թիֆլիզի նահանգի ազնուականներն անցեալ շաբաթ իշխ. Մուխրանսկու փոխարէն, որ հրաժարուեց իւր պաշտօնից, նոր պարագլուխ ընտրեցին իշխան Մաղալովին։ Բացի այս ընտրութիւնից, Ազնուականների ընդհանուր ժողովը, որ տևեց մի քանի օր, մի առանձին ուշադրութեան արժանի բան չարաւ և առհասարակ ժողովի մէջ չքննուեցին լուրջ հարցեր։

***

Մոսկուայի յայտնի ռուս դերասանուհի Երմոլովան մեծ յաջողութիւն ունի Թիֆլիզում։ Ազնուականների բանկի թատրոնն ամեն նորա ներկայացումներին լիքն է լինում այցելուներով և երբեմն դահլիճում կանգ նելու տեղ էլ չէ լինում։ Պէտք է ասած, որ Երմոլովան արժանի է այն ոգևորութեանը, որ տիրում է թատերասէր հասարակութեան մէջ։ Նա բաւական խոշոր բեմական մի տաղանդ է, որի նմանները շատ հազուագիւտ են Ռուսաստանում։ Մանաւանդ լիքն է լինում թատրոնը երբ ներկայացվում են կլասիքական պիեսներ, ինչպէս «Մարիա-Ստիւարտ» Ֆեդրա և այլն, որոնց մէջ տաղանդաւոր դերասանուհին կարողանում է փայլել իւր բեմական բոլոր ոյժերով։ Յատկին այն է, որ Երմոլովայի repertoire-ը բաղկացած է մեծ մասամբ ռուսաց վերջին ժամանակի անշնորհք դրամայի անհամ արդիւնքներից։ «Տատեանա Րեպինա», «Սիմֆօնիա, «Բաննայեա Օսեն» և այլ սոցա նման անճաշակ անմիտ, աննպատակ և գեհենիկ շաղփաղփանքներ՝ միանգամայն անարժան է թէ մի լուրջ տաղանդի մասնակցութեանը և թէ փոքրիշատէ ճաշակով այցելուի ուշադրութեանը։ Եթէ հասարակութիւնն այցելում է այդ բթամիտ պիեսները— լոկ նրա համար, որ խաղացողը Երմոլովան է։ Կարծում ենք, որ այս հանգամանքը դարձեալ իրաւունք չէ տալիս յարգելի դերասանուհուն հանդիսականների յարգանքը հարստահարել։ Ուժով տաղանդներ ստեղծել չի կարելի զանազան Կարպօվներինց, Զայկովսկիներից և Սուվօրիններից, և եթէ ռուսաց առանց այն էլ աղքատ բեմը տաղանդաւոր Օստրօվսկու մահից յետոյ օրինաւոր repertoire-ից թափուր է մնացել, այդ չէ նշանակում, որ հսկաներին պէտք է փոխարինեն թզուկները։

***

Անցեալ երկուշաբթի, մայիսի 27-ին Թիֆլիզի քաղաքային Դումայի նիստին առաջին անգամ նախագահեց նորընտիր քաղաքագլուխ իշխ. Նիկ. Արղութեան—Երկայնաբազուկը։ Բացի Դումայի մեծամասնութիւնից, այդ երեկոյ ներկայ էին և երկու սեռից էլ բազմաթիւ հանդիսականներ, որ լցրել էին Դահլիճի վերին յարկը։ Նոր քաղաքագլուխը նախ քան նիստի բացուելը դիմեց ժողովականներին հետևեալ համառօտ ճառով. «Մարտի 25-ին ձեր կողմից ընտրուելով և ներքին գործերի նախարարութեան կողմից հաստատուելով Թիֆլիզի քաղաքագլուխ, մայիսի 24-ին ես երդուեցի և մտայ իմ պաշտօնը։ Յայտնելով այս մասին ձեզ, ես պարտք եմ համարում շնորհակալութիւնս արտայայտել այն բարձր պատուի համար, որի լինել կոչց տուիք։ Դժուար է վաղօրօք գուշակել այն արդիւնքներն, որ կունենայ իմ, իբրև քաղաքագլխի, գործունէութիւնը։ Այս գործունէութիւնը կախումն կունենայ ինչպէս Դումայի և Վարչութեան համերաշխութիւնից, նոյնպէս և Թիֆլիզ քաղաքի նիւթական դրութիւնից։ Բայց, ընտրելով ինձ քաղաքագլուխ, դուք մի բանով սխալուած չէք, այն է՝ մայրենի քաղաքին ոչ ժերիս և ընդունակութեանս չափ ծառայելու եմ կատարեալ պատրաստակամութեամբ։ Առաջիկայ գործունէութեանս վերաբերմամբ ինձ ոգևորում է այն կոչը, թէ դուք ձեր ստեղծագործական և կարգագրական գործունէութիւնը քաղաքային գործերի բարւոքման համար կըշարունակէք նոյն եռանդով, ինչպէս առաջ։ Ինչ վերաբերում է գործադիր օրգան քաղաքային վարչութեանն, ես լիովին հաւատացած եմ, որ իմ ընկերները, իմ նախագահութեամբ, ճշտօրէն կըկատարեն օրէնքի պահանջները և ձեր որոշումները։ Ես բաղդաւոր կը լինիմ, եթէ իմ գործունէութիւնը կ'արժանանայ ինձ ընտրողների հաւատարմութեան, և կրկնակի բաղդաւոր կըլինիմ, եթէ նա կ'արժանանայ և Դումայի միւս իրաւասուների հաւատարմութեանը»։

Քաղաքագլխի այս ճառն ընդունուեց բուռն ծափահարութիւններով։

Այնուհետև նիստը սկսուեց։ Քաղաքագլուխը յայտնեց վարչութեան նախկին քարտուղար Յակովբ Տիգրանեանի մահուան լուրը։ Դուման յարգելով հանգուցեալի եօթ տարուայ ազնիւ և եռանդուն գործունէութիւնը քաղաքային քարտուղարի պաշտօնում, պատուեց նրա յիշատակը ոտքի կանգնելով։

***

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՀՈՒԼԻԱՆԵՐԻՑ

—

Ուսուցչական խումբը տեղւոյս երիտասարդների աջակցութեամբ կամեցաւ Զատկի տօներից յետոյ մի թատրոնական ներկայացումն տալ։ Սակայն դիւղում ոչ մի յարմար դահլիճ չգտնելով՝ հարկաւոր դատուեց դպրոցի երկու սենեակների միջնորմը վերցնել։ Դրա համար անհրաժեշտ էր ծախս, որ պ. Յարութիւն Քիշմիշեանի միջոցով հանգանակուեց։ Պատրաստուեց բեմ, շինուեց տախտակէ միջնորմ։

Պիէսներից որոշել էին այնպիսին, որոնց մէջ կնոջ դեր կամ չկար, կամ թէ կար, մէկն էր։ Բայց ցաւն այն էր, որ մէկ դերասանուհի էլ չէր ճարւում. տեղւոյս հայ տիկիններից ու օրիորդներից ոչ մինը քաջութիւն չէր անում բեմ ելնելու. նախապաշարմունքը և իրանց ինտելիգենտ կոչող անբերիմիտների «ասէկօսէները» յաղթում էին մեր դպր. վարժուհուն անգամ։ Անճարութիւնից կնոջ դերը յանձնուեց մի պատանու։ Կրկնութիւնները վերջանալու վրայ էին, որ բարեբաղդաբար մեր դիւղը հիւր եկան ալէքսանդրապոլցի Վարաժեան ամուսինները։ Տիկ. Վարաժեանը

յարգեց թատերասիրաց խնդիրը, դեր վերցրեց ու իւր օրինակով խրախուսեց մեր ամաչկոտ տիկինները և օրիորդներին։ Այսուհետև շատերը տեղացիներից կրմասնակցեն. գուցէ տաղանդ էլ ցոյց կրտան, բայց նախաձեռնութեան պատիւը մեծ. տիկ. Վարաժեանին է պատկանելու։

Պիէսներն էին Կը-ի-չը-ի, Մ-ոչ չը-ի-չը և Երի- ֆաշոնէներ։ Իբրև թատերասէր աչքի էր ընկնում Ա. Զորանեանը՝ Աշ-Մ-ոչ և Մոչ դերերում։ Դահլիճը լիքն էր ժողովրդով. մուտք գոյացաւ չոռ ռուբլի, որովհետև տոմսակները դիտմամբ էժան էին գնահատուած։ Զուտով կրլինի երկրորդ ներկայացում յօգուտ դպրոցի՝ նոր ձեռք բերած դեկորացիաներով։ Այսուհետև թատրոնական ներկայացումները դպրոցի հաստատ աղբիւրներից մինը կրկազմեն. մինչև օրս դեկորացիաներ չլինելու պատճառով անտանելի տանջանք էր բեմ պատրաստելը։

Տասն տարուց աւելի է որ մեր դպրոցի անունով հանգուցեալների յիշատակին դրամական նուէրներ են լինում։ Ընդհակառակ օրերը մեծ. պ. Լևոն Մելիք-Ղամեանցը իւր Հօրեղբօր որպէս մինուճար Ղամի յիշատակի համար խոստացաւ քսան ռուբլու դրքեր նուիրել դպրոցի գրադարանին։ Նոյն պարոնը 11 տարի առաջ նոյն գրադարանին նուիրել է եօթանասուն ռ. աւելի արժողութեամբ դրքեր։ Վաղամեռիկ Ղամի անունով՝ լրան յարգող ընկերները գրադարանի համար յարմարաւոր նոր պահարաններ են շինել տալիս։

Մորեխ կոտորելու գնացող մշակները վերադարձան. նրանց օգնութեան է հասել չալաժեռը՝ բնաջինջ անելով սով տարածող միջատին։ Զուլաւերցին ահ չունի մորեխից՝ որի արհաւիրքին երբէք չի ենթարկուել, այլ կարկտից։ Արտերն ու այգիները անչափ հետևալի են, կարծէք մարդու երեսի ծիծաղում են, փառաւոր բերք են խոստանում, եթէ որևէ դժբաղդութիւն չպատահի։

Գիւղիս շտեմարանների ցորենները փոխանակ շահով ցրելու, չդիտենք ինչ հիման վրայ վաճառել տուին՝ թազարը (10 փ.) 5 ռ. 50 կ.։ Նպատակը յայտնի չէ, ինչպէս և անյայտ է ում գրպան մտնելը։

Տիղիս կլիման շերամապահութեան համար չափազանց յարմար է. հնուէն ամեն մի գերդաստան գլխաւոր պարապմունքն ու եկամուտը պիտի եղած լինի այդ, որին ապացոյց մեր գիւղի անունը—Ջ-ը-ղ-ա-է։ Եղել են մանարաններ, գործատներ, իսկ այժմ մնացել է նախկին շերամապահութեան լոկ ստուերը։ Յատկապէս թթենու այգիներ չկան։ Զատ պահողը միայն մի քանի մատնոց (մսխալ) է դնում, այն էլ աղջկայ տէրերը—նշանդրէքի ու հարսանիքի պատրաստութեան համար։

Տեղոյս դպրոցներում հարցաքննութիւնները կրսկսուեն մայիսի վերջին և կրտևեն մինչև յունիսի 5-ը։

ՄԽԻԹԱՐ

1891 թ. 21 մայիսին։

*
* *

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

28 մայիսի 1891 թ.

Տեղիս հին քաղաքամասում գտնուող սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ խարխուլ և քայքայուած լինելու մասին՝ ճարտարապետի մօտերքս կազմած արձանագրութեան հիման վերայ՝ Թիֆլիզի Վիճակային կոնսիստորիայն հրամանագրել էր դոցել անմիջապէս եկեղեցին և շինութեան համար հոգաբարձուներ ընտրել ժողովրդից։

Վիճակային կոնսիստորիայի հրամանագրի համաձայն՝ տեղիս եկեղեցւոյ Հ. դործակալը ամսոյս 22-ին ժողով դումարեց՝ եկեղեցւոյ վերաշինութեան համար հոգաբարձուներ ընտրելու։ Հայր դործակալը բաց անելով ժողովը՝ կարդաց Վիճակային կոնսիստորիայի հրամանագիրը և ապա հրամանագրի համաձայն առաջարկեց ժողովականներին եկեղեցւոյ վերաշինութեան համար ընտրել երեք հոգաբարձու։

Ժողովականներից մինը դառնալով հայր գործակալին և նրանից խօսելու իրաւունք ստանալով, ի միջի այլոց, ասաց, թէ նախ քան հոգաբարձուների ընտրութեան դործին դիմելը՝ ինքը իրրև տեղացի, մանաւանդ իրրև այդ եկեղեցւոյ հաշուատես, պարտք է համարում յայտնելու, որ ս. Ստեփանոս եկեղեցւոյ երէցփոխ մահտեսի Յ. Մ.-ի հաշիւը տեսնուած չէ, հարկաւոր է նախ նրա հաշիւը տեսնել և ապա հոգաբարձուներ ընտրել։

Հայր գործակալը հաւանութիւն տալով պարոնի առաջին, յայտնեց, որ հոգաբարձուներ ընտրելուց յետոյ, նա կրպարտաւորեցնի երէցփոխին անմիջապէս հաշիւ ներկայացնելու։

Այնուհետև ժողովը զբաղուեց հոգաբարձուների ընտրութեան հարցով։ Հոգաբարձուների իսկոյն ընտրութիւնը ժողովականները նպատակայարմար չէին գտնում, ուստի այս անգամ որոշեցին ընտրել 20 պատգամաւոր։ Երկու օրից յետոյ, ամսոյս 24-ին հայր գործակալի հրաւէրով կայացած պատգամաւորաց ժողովում ձայնից բազմութեամբ ընտրուեցան. պ. պ. Տ. Տէր-Մինքայէլեան (դանձապահ), Ն. Տէր-Գրիգորեան (քաղաքագլուխ), Գ. Քուփալեան։ Յարգելի պարոնների վերայ բարոյական պարտք է դրուում կազմել եկեղեցւոյ մակարդակն ու նախահաշիւը, ի հաստատութիւն ներկայացնել հոգևոր իշխանութեան, հոգալ եկեղեցւոյ վերաշինութեան համար հարկաւորուող պակասորդ դումարի հանգանակութեան գործը։

—Յունիսի 2-ից ոչ ուշ գալու է Սիալցիա Հ. Թեմական տեսուչ Գեղամեանը՝ պարոններում հարցաքննութիւններին ներկայ լինելու համար։

Վ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ջ. ԲԱԼՈՒԼԵԱՆ, ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակեց Տ. Ելենէ Բալուեան

Մոսկուա, 1891. եր. 129։

Մեր մէջ թէ հեղինակները և թէ խմբագրութիւնները մի խոշոր թիւրիմացութեան զոհ են լինում, շփոթելով տաղաչափութիւնը բանաստեղծութեան հետ, մինչդեռ դոցա մէջ ոտներ ու ձորեր կան։ Տաղաչափութիւն կամ ոտանաւոր (стихотвореніе) կոչւում է այն խօսքը, որի ոտքերը ձևը համաչափութիւն ունի, որի մէջ տողերը միմեանց հետ հերդաշնակւում են վանկերի թուով, շեշտերի դիրքով և յանգերով, համաձայն տաղաչափական կանոններին, որ այլևայլ ազդերի մէջ տարբեր են լինում։ Ուրեմն որևէ արձակ խմաստ (prose) կարելի է տաղաչափութեան վերածել—բաւական է

որ այդ իմաստն արտայայտող բառերը շարադրենք տաղաչափութեան կանոններով։ Օրինակ այս նախադասութիւնը՝ «աշակերտները դնում են ուսումնարան, որտեղ ստանում են ուսում ու կրթութիւն» —արձակ խօսք է թէ՛ ձևով և թէ իմաստով, որի մէջ մի կաթիլ բանաստեղծութիւն չկայ. իսկ եթէ այս իմաստն արտայայտենք հետևեալ կերպով.

«Աշակերտներն | ուսումնարան | են գընում, | «Որ ըստանում | են կրըթութիւն և ուսում» | —սա կլինի հայերէն կանոնաւոր տաղաչափութիւն, որովհետև վանկերի թիւն երկու տողում հաւասար են, շեշտերն իրանց տեղումն են և կանոնաւոր չանգեր ունին։ Բայց այս տաղաչափութիւնն էս, որչափ և նորա նախասիրել արձակ նախադասութիւնը՝ բանաստեղծութեան նշոյլ չէ պարունակում իւր մէջ։

Մի գրուածք բանաստեղծութիւն (poésie) լինում է իւր բովանդակութեամբ, առանց ուշադրութիւն դարձնելու, թէ նորա արտաքին ձևը տաղաչափական է, թէ արձակ։ Եթէ գրուածքը նկարագրում է դասական աշխարհը, եթէ նա կենդանի պատկերացնում է դէպեցիկը, բարին և առաքինին և սիրելի է դարձնում ընթերցողին, եթէ նա շօշափելի պատկերացնում է անդարձականութիւնը, ոգին, վսեմը և ընթերցողին մէջ զգուանք և ատելութիւն է ազդում դէպի նրանք, եթէ նա ոգևորում է ընթերցողին, ազդում է մարդկային մաքուր և բարձր զգացմունքներ— այդպիսի գրուածքը կլինի բանաստեղծութիւն, չնայելով նորա արտաքին ձևին։ Որոմն լինչպէս լինում են տաղաչափութիւններ արձակ իմաստով (prosaïque), այնպէս և կարող են լինել բանաստեղծութիւններ արձակ լեզուով (poésie en prose). և ամենևին պէտք չէ շփոթել բանաստեղծութիւնը տաղաչափութեան հետ։

Այս ահագին տարբերութիւնն ի նկատի ունենալով՝ դիւրաւ կարող ենք բացատրել, թէ ինչու մեր մէջ վերջերս այսքան բազմաթիւ «բանաստեղծութիւններ» և «բանաստեղծներ» են առաջ եկել։ Ով չգիտէ, որ ամեն մի գրիչ գործածող մարդ փորձում է յաճախ ոտանաւորներ գրել, իւր անունը դեռ ուղիղ գրել չգիտցող աշակերտից սկսած մինչև պատկառելի ծերունիները, յայտնի ուսումնականները—ամենքն էլ գրում են ոտանաւորներ. բայց նոցանից շատերը, մանաւանդ որոնք գեղարուեստի ճաշակ և մտաւոր զարգացում ունին՝ նկատելով որ իրանց ոտանաւորները ոչ մի գրական արժէք չունին՝ երբէք լոյս աշխարհ չեն հանում, շատ շատ՝ պահում են իրանց մօտ և երբեմն կարդում ծանօթներին. իսկ ուրիշները, կամ չհասկանալով բանաստեղծութեան ինչութիւնը, կամ ինքնահաւանութեամբ կուրացած՝ չնկատելով իրանց արտադրած գրուածքների պակասութիւնները, կամ բանաստեղծ կոչուելու անախտաւութիւնից դրդուած, կամ վերջապէս վատ օրինակ առնելով ուրիշներից՝ տպագրում են այդ անմեղ, բայց և անօգուտ ոտանաւորները, կնքելով նրանց «բանաստեղծութիւններ» մեծահնչիւն բառով, և կարծելով թէ գրանով իրանք մտաւորների սրդեկիր կդառնան։ Պատահաբար և հարկէ, զգուելով զգում են այդ ինքնակոչ սրդեկիրներից և ցախաւելով Պարնասից դուրս են աւելում նոցա. բայց վնասում է հասարակութիւնը, որի մէջ երևան են գալիս և կարգացում են այդ ոտանաւորները։ Մեր հասարակութիւնը դեռ նոր է սկսում կարդալ, դարդանալ, ճաշակ կազմել գրականութեան տեսակների մասին. նորան այժմ հարկաւոր են ընտրելագոյն գրուածքներ, որպէս զի նա լաւ ուղղութեամբ զարգանայ և ուղիղ ճաշակ կազմէ. հակառակ դէպքում նա կամ կդպչի կարդալուց, նկատելով որ կարդացած գրքերն իրան ոչ մի օգուտ չեն բերում, կամ ստիպուած կարդալով՝ իւր ճաշակը միանգամայն կխճացնէ, անընդունակ կդառնայ լաւը վատից զանազանելու։ «Չատ ու բարակ մի գինն է» առածը որչափ վատ զաղափար է կազմել տալիս մեզ այն ժողովրդի մասին, որ յօրինել է նրան. մենք փոխանակ բժշկելու ժողովրդի այդ անընտրողութիւնը, փոխանակ վարժեցնելու, որ նա յարգէ լաւը, օգտակարը և պախարակէ վատն ու վնասակարը, փոխանակ նորա ճանաչողութիւնը զարգացնելու՝ մենք մեր անպիտան գրուածքներով ընդհակառակը բթացնում ենք նորա ճանաչողութիւնն և աւելի և աւելի անընդունակ դարձնում ճանաչելու չարն ու բարին։

Պարտաճանաչ և հասկացող մարդը տասն անգամ մտածում է ամեն մի բառ գրելիս, որ մի գուցէ պա վնասակար լինի ընթերցողին համար. նա իւր միջին լաւութեան գրուածքներն անտիպ է թողնում, գիտնալով որ ժողովրդին լաւագոյններն են հարկաւոր, լաւագոյններն անել չկարողանալով՝ նա աւելի լաւ է համարում հեռանալ ասպարէզից. և ահա հեռուից, սիրտը մորմոքելով, նա դիտում է, թէ ինչպէս ուրիշները, նուազ պարտաճանաչութեամբ ու հասկացողութեամբ, աւելի նուազ արժանաւորութեամբ՝ իշնում են այդ ասպարէզը և կանգուններ ձեռնարկին՝ չափում չափչփում են իրանց ապատ կամքով և համարձակ երգում «Հաստ ու բարակ մի գին է, վայ բարակ մանողին»։ Եւ պարբերական մամուլը ոչ միայն նոցա առաջը չէ առնում՝ այլ հէնց ինքը հիւրասիրում է նոցա, ոտքի կանգնեցնում, թև ու թևիկ տալիս...

Այս պատճառով շատ դժուար է մեր մէջ մատենախօսի դերը, երբ նա պէտք է քննէ նոր դուրս եկող բանաստեղծութիւնները։ Եթէ նա համեմատելու լինի այդ գրուածքներն իսկական բանաստեղծութիւնների հետ՝ շատ տխուր եզրակացութեան պէտք է հանկի, պէտք է խոստովանի, որ դոցա մէջ չկայ հետք, չկայ նշոյլ բանաստեղծութեան, որ հեղինակները չգիտեն, ինչ է բանաստեղծութիւնն և ինչ պահանջների պէտք է լրում տայ։ Այս կերպով մատենախօսը ոչ միայն կվիրաւորէ անկեղծ, ոգևորուած, փափուկ սրտեր, այլ գուցէ և ոպանէ այն նոր արձագանգող ոգին, որ Հասունանալով ժամանակին Թերևս արտադրէր բանաստեղծութիւններ, կամ ինչպէս բանաստեղծներն են ասում՝ գուցէ նա իւր կոշտ մատներով կտրէ նոցա ոգևորութեան նուրբ ու թոյլ լարերը, որոնք ապագային կարող էին զօրեղանալ և քաղցր նուագել։ Իսկ թեթև ներողամիտ աչքով էս չէ կարող նայել մատենախօսն այդ «բանաստեղծութիւնների» վերայ, այլապէս նա կմեղանչէ Հասարակութեան առաջ, որին պարտաւոր է ուղիղ հաշիւ տալ գրականութեան ասպարէզում ելևէջած գրուածքների մասին, ցոյց տալով նորան դոցա իսկական արժէքը, պատպարելով նորա միտքն ու ճաշակը վնասակար ազդեցութիւնից։

Այսպիսի տարտամ դրութեամբ ձեռնարկում ենք մենք Ջ. Բալուզեանի «բանաստեղծութիւնների» մասին մի քանի տող գրելու։

ԹԱՆԳԱՐԱՆ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԱՐՈՒԵՍՏԳԷՏ—ՆԿԱՐԻՉՆԵՐԻ

(Պատկեր Գ ա մ բ ա յ ի)

; Ա Պ Ր Ո Յ Ր

Այս բանաստեղծութիւնները, որոնք արտատպուած են «Գրական և պատմական Հանդէսից», «Մուրճից» և «Աղբիւրից»՝ 56 են թուով. սոցանից 29-ը թարգմանութիւն են, կամ թարգմանաբար փոխադրուած ուրիշ հեղինակներից (Հէյնէից 8, Նագսոնից 5 և այլն), իսկ 27 ինքնուրոյն են, որոց մասին և կխօսինք մենք, թողնելով թարգմանութիւնները:

Ջ. Բալուեանի ոտանաւորները, բովանդակութեան կողմից, խիստ տարբեր տպաւորութիւններ են թողնում ընթերցողի վերայ. նոցանից մեծ մասն այնքան անշնորհ են և անբովանդակ՝ որ ընթերցողին գինում են թէ իրանց և թէ իրանց հեղինակի դէմ, որ իւր մտքի և սրտի այդպիսի անկատար և անբովանդակ արտադրութիւնները տալիս է հասարակութեան՝ թէ «կարդացէք այս բանաստեղծութիւններն և օգուտ քաղեցէք»: Մի քանիսը մինչև անգամ վերին աստիճանի պակասաւոր են—ոչ՝ միտք, ոչ արուեստ, ոչ երևակայութիւն, ոչ իդէալ, այլ միայն տգեղ տողեր (օրինակ «Վահագնայ ծնունդը»). դոքա աշակերտի թոյլ գրչին էլ պատիւ չեն բերում, ուր մնաց «բանաստեղծին»: Իսկ ուրիշներն, ընդհակառակը, պարունակում են իմաստ, երբեմն գեղեցիկ իմաստ, ոգեւորութիւն, ազնիւ ձգտումներ. սոքա եթէ բանաստեղծութիւններ էլ չկոչուին՝ սակայն յուսալ են տալիս, թէ նոցա հեղինակը կարող է ժամանակով դառնալ բանաստեղծ:

Իբրև պակասութիւն հեղինակի ուղղութեան մէջ՝ կարելի է նկատել այն հիանդոտ երևակայութիւնը, որ յատուկ է մարմնով հիւանդ, կեանքի առպարէզում ընկճուած, վհատած բանաստեղծներին (Նագսոն): Մեր հեղինակն էս, չգիտենք ինչու, բանաստեղծին, կամ իրան իբրև բանաստեղծ՝ նկարագրում է այնպէս, որ լուրջ ընթերցողը քիչ է մնում դիմէ բժշկի կամ ոստիկանութեան օգնութեանը: Բանաստեղծը, հեղինակի երևակայութեան մէջ, մի ջղային, հիւանդոտ անձ պէտք է լինի, որ «գաղտնի ցաւերով տառապած՝ փակւում է խաւար սենեակում, զառանցում է, անէծքներ է թափում գունատ շրթունքից, բացորոշ տեսնելով իւր ոչնչութիւնը. փետում է մազերը, յուսահատաբար ջարդում է փայտացած մատները, ցնցւում է, ցատկում է աթոռից, գժուած վազվզում է անկիւնից անկիւն» (էջ 22) «ձեռքը դրած կրծքին, որ կրծում է թոքախտի չար որդը. նա կռւում է գայրացած խուժանի դէմ, որ ուզում է նրան պատռել, կորճանել. նա անշուք սենեակում հիւանդ, շնչասպառ պառկած է չոր գետնին, բերանից արեան լեարդեր է թափում» և փոխանակ բժիշկ հրաւիրելու՝ այդ դրութեան մէջ խեղճը «քնարը սեղմում է քայքայուած կրծքին ու զարկում ջարդուած, կտրած լարերին», որ երևակայում ենք լինչ գեղեցիկ ձայներ կհնչեցնէ—այդ ջարդուած քնարը, կտրած լարերով: Այդ բանաստեղծը, այդ մարգարէն քանի՛ քանի անգամ լողում է կատաղած ծովում, կռւում է ալիքների դէմ, կռւում է ստութեան դէմ, կռւում է մանաւանդ «գայրացած խուժանի, ամբոխի հետ, այն էլ մեն-մենակ: Ամբոխը նրան կորճանում է, պատառում է, խաչում է, մարտիրոսում է ճշմարտի համար» (106—7), «ամբոխը կոյր է, անմիտ է, քարկոծում է նրան առանց խտրութեան» (109): Ի՞նչ հարկաւոր են այսքան սև գոյներ ու սարսափներ. մի՛թէ դրանք ճշմարտութիւն են կամ արտայայտիչ մեր Հասարակական դրութեան, մի՛թէ ամբոխը թշնամի է ճշմարտութեան, կորճանում, պատառում, խաչում, քարկոծում է ճշմարտութեան քարոզին, այն ամբոխը, որին բանաստեղծն իւր «ԷԼԼ սրտով կոչում է «գայրացած խուժան, կոյր, անմիտ» և որ գառի հեզութեամբ լսում է մեզ, մեզանից էնդրում է լոյս ու ճշմարտութիւն, սէր և կրթութիւն, և յաճախ հակառակն է ստանում: Խեղճ ամբոխը ի՞րը զոհեց այդ սարսափելի անզթութիւնները, այն էլ ճշմարտութեան քարոզի վերաբերութեամբ, ինչո՞ւ ենք նրան բամբասում, փոխանակ հայելուն մէջ նայելու և մեր պատկերը տեսնելու: Այսպիսի երևակայութիւնը բանաստեղծի և ամբոխի և դոցա փոխադարձ յարաբերութեան մասին իրական չլինելուց զատ՝ սխալ է միանգամայն, և չենք կարծում, թէ այդ շառաչող բառերը որևէ կրթիչ նշանակութիւն ունենան, բացի զարմանք և ատելութիւն ծնեցնելուց հասարակութեան մէջ դէպի այդպիսի Պոնֆիշոտ մարգարէները, որոնք անպատճառ ուզում են կռւել, ուստի և երևակայութեամբ ստեղծում են գոյութիւն չունեցող թշնամիներ և նոցա հետ կռւում... թաղաքամանից բղխած բացականչութիւններով:

Ստ. Մ.

(Կշարունակուի)

ՖԵԼԻԵՏՕՆ

ԿԱՐՆՈՑ ԳԱՂԹԸ

Վ Ե Ր Ջ *)

Երբ ամբոխն առաջին օրը ճանապարհ ընկաւ, զօրավարը յորդորեց Կարապետ արքեպիսկոպոսին, որ շուտով քաղաքից հեռանայ լինքն էլ, որպէս զի ժողովուրդը չը դանդաղի այլ և այլ սնոտի յոյսերով ու պատճառաբանութիւններով. և նա նորա խօսքով մի քանի օր չասանդալէի վանքում հանդստանալուց յետոյ յունիսի 3-ին գնաց դէպի Կարս, և երբ ժողովուրդը հաւաքուեցաւ այնտեղ՝ այնտեղից էլ դուրս գնաց դէպի Ախալցխա: Արզրում քաղաքում մրնացին կաթոլիկներից միայն չորս տուն, որոնք չը յօժարեցան դուրս գալ այնտեղից, և դարձեալ եօթ տուն, որոնք գնալով Տրապիզօն, ցանկանում էին խրիմ գնալ այնտեղից, բայց տաճիկների տուած յոյսերից ու խոստումներից համոզուելով՝ յետ դարձան այնտեղից իրանց տեղը. Հայերից էլ մնացին մօտ Հարիւր, որոնց պարտզլուխը Փեօսէ օղլու արապկերցի Համբարձումն էր, մէկ ժիր և գործունեայ մարդ, որոնց վերջին օրը Պօլսից նոր առաջնորդ Հաւսաւ Բարդուղիմէոս վարդապետը, ժողովրդին յետ պահելու գաղթելու դիտաւորութիւնից, բայց ոչինչ օգուտ չունեցաւ: Իսկ Կարնի շրջակայ գիւղերում խիստ քիչ մնացին թէ Հայերից և թէ կաթոլիկներից: Ճինիս գիւղում, ուր մօտ Հարիւր տուն կային, այնտեղի քահանան ճանապարհ ընկնելիս եկեղեցին անգամ կրակ տուեց, որ այլ ևս յետ դառնալու յոյսը չունենան. նա այնպէս էր զարդարուել զէնքերով, կարծես մի քաջ նահատակ էր պատերազմի համար պատրաստուած: Բայց պէտք էր տեսնել վերջին օրը, յունիսի 5-ին, թէ ինչպէս Արզրումից ու գիւղերից ժողովուրդը գունդագունդ խռնվում էր՝ երբ Բանգրա-

(* Տես „Արձագանք“ № 11.

տևը ղինուորական հանդիսով քաղաքը յանձնեց Փահլիլ փաշային, որ հաճի Հապպան փաշայի կողմից եկած էր քաղաքին տիրելու, անցնելով Հասանղալէից: Կարելի է ասել, թէ Կարնոյ դռներից մինչև Հասանղալէ, որ վեց ժամուայ ճանապարհ է ձիով, ամբողջ ճանապարհը բռնուած էր զօրքով, գաղթականներով և նոցա կարասիներով ու անասուններով: Եւ որովհետև դեռ դիւղերում շատերը կային, որոնք ցանկութիւն ունէին գաղթելու, ուստի Ֆանգրատևը թողեց քաղաքի մէջ Քրիստոֆօլօս Վօյնիկով յոյնին, որ տաճիկ լեզուին տեղեակ էր, մասնաւոր հեծելազօրի հետ միասին, և նորա հետ էլ մի քաջ մարդուն՝ Մկրտիչ Թօշօենց անունով, որ պատուած էր Հազարապետութեան անունամբ, որպէսզի նոքա մնան մինչև Հաճի Հասան փաշայի գալը և ողջունեն նորան իւր կողմից ու միանգամայն Հաւաքեն չուող ժողովրդեան մնացած «զկաց մընաց» բաները ու Հասցնեն իւր ետևից:

Այս ժամանակները կարնեցւոց գաղթելու մէջտեղին՝ Պայազիտի Ռէուէթ զօրավարը դատարկում է իւր ձեռքի տակ եղած գաւառները՝ Պայազիտը, Ալաշկերտըն ու Տիատինը, և յանձնում է օսմանցիներին. և որովհետև նոցա սահմանը ռուսաց երկրին մօտ էր և այնտեղ ժողովուրդը հեշտութեամբ էր փոխադրուում, բոլոր աշխատութիւնը, վերը յիշածին պէս, կարնեցիներին մնաց:

Ժողովրդեան այդ ահագին բազմութիւնը տարան Վանանդայ դաշտը Կարս քաղաքի դէմուդէմը, ուր անպակաս էր նոցա տէրութեան խնամքը, որ մարդաթուով ալիւր էր բաժանում կարօտեալներին: Գիւղացիներին շուտով տարան նշանակած տեղը, որովհետև նոքա սայլեր և անասուններ ունէին, և բացի հացից ուրիշ ոչ մի տեսակ չէին ծանրաբեռնում պետութիւնը: Իսկ քաղաքացիները ստիպուեցան սպասել այնտեղ քիչ թէ շատ, մինչև որ սայլեր կգտնէին և կշարժէին այդքան բազմութիւնը. իսկ սայլերի խիստ մեծ կարօտութիւն կար ոչ միայն ամբոխի բազմութեան պատճառով, այլ և զօրքի ծանրոցի, պատերազմական անօթների ու պատերազմից մնացած բազմակուտակ աւարի համար: Որոնք ձեռնհաս էին՝ սայլեր վարձեցին և Ախալցխա ուղարկեցին. այսպէս և կարսեցիք էլ դատարկեցին իրանց քաղաքն ու գիւղերը և անցան Ջօրագեալու գաւառն ու Փամբակ, իսկ մնացած կարնեցիները փոքր առ փոքր արքունի ծախքով անցան Գիւմրի աւանը: Վասնզի գաղթելու գործի ուշանալու պատճառով, և նշանակեալ ժամանակը հասնելուն համար, երբ պէտք է Կարսը օսմանցիներին յանձնէին, այլ և ս հնար չկար ժողովրդեան Արտահանով ու Ձրլտրով ուղարկել, որովհետև Արտահանն էլ Օսմանցու մասն էր, և Ֆանգրատևը պատուիրեց նոցա վոխադրել Գիւմրի ռուսաց սահմանը. որտեղից կամաց կամաց թէպէտ շատ երկար ճանապարհով գնան իւրեանց տեղը. և յուլիսի 5-ին, Արգրումը վերադարձնելուց մի ամիս յետոյ, Կարսն էլ յանձնեցին, թողնելով այնտեղ պայմանին համաձայն վերոյիշեալ Վօյնիկովին մինչև կարսեցիների ցորենի հունձը: Ժողովուրդը երբ հասաւ Գիւմրի, բանակեցաւ Սիուրեան գետի ափի մօտ, որ տաճկերէն կոչւում է Արփաչայ. և մինչև այնտեղ էր Ֆանգրատևը՝ կաթոլիկներին, որոնք մինչև այդտեղ հասնելը խառն էին հայերի հետ, բաժանեց նոցանից, առանձին բանակեցրեց և վերակացու տուեց նոցա, որպէսզի դիւրութեամբ կարողանայ ուղարկել նոցա իրանց ցանկացած տեղը:

ԿՍՎԿԱՍԵԱՆ ՏԻՊԵՐ

ԴԵՐՎԻՇ (ըստ լուսանկարի Ֆարկանովի)

Կարսի բնակիչները, որոնք բացի գիւղացիներից իրանք մօտ վեց Հարիւր տուն էին, միանգամից միասին չփոխուեցան, այլ երեք մասի բաժանուեցան, մի մասը գնաց Փամբակու Ղարաքիլիսէ աւանում բնակութիւն Հաստատեց, կէսը աշխատեց Գիւմրին քաղաք դարձնել և ոմանք իրանց առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսի Հետ ընտրեցին իրանց բնակութեան Համար Արագածի կողի մօտ մի գիւղ, որ այժմ կոչւում է Ղիչաղ, ուր գտնւում է 1201 թուին կառուցած մեծաշէն եկեղեցին: Միևնոյն կերպով և այն գիւղացիները, որոնք Կարսի նահանգից անցան այս կողմը, տարաձուեցան կէսը խումբ խումբ և կէսը ցրուեցան մօտակայ գիւղերը մինչև Ապարան. այսպէս նաև Կարնոյ գիւղերից ոմանք. իսկ ուրիշները

տեղաւորուեցան Սիսլեխայի գաւառներում՝ Ազղոր, Խրդգ, Ապատատուման, Սիլքալակ և ուրիշ տեղեր։ Ոմանք էլ հացի առժամանակեայ կարօտութիւնից նեղանալով յետ դարձան իրանց երկիրը՝ օսմանցիներից լաւ ընդունելութիւն գտնելով. սակայն ընդհանրապէս կարսը այնքան հաւատարիմ չդտնուեցաւ իւր խոստման մէջ, ինչպէս կարինն ու Պայազիտը։

Դառնանք այժմ Ախուրեանի ափերին բանակուած կարնեցիներին, որոնք ուշացան ու մօտ երկու ամիս մնացին, որովհետև սայլերը չէին գտնում ճանապարհ ընկնելու համար, վասնզի քաղելու և հերկելու օրերը մօտեցած լինելով՝ ամեն մարդ իւր գործովն էր զբաղուած և մշակների պէտքը աւելացած էր. իսկ տէրութիւնը իրաւունք չունէր բռնութեամբ նոցա սայլերը հաւաքել, վասնզի եկաւոր ժողովրդեան վրայ՝ մեծ վնաս պատճառած պիտի լինէր, եթէ սայլերը ժողովելով՝ հունձը ոտնակոխ անէին, ուստի այդ բոլոր գաւառներին վնաս էր։ Վասնորոյ Ղիւմրի գտնուող հրամանատարները մխիթարական լուսաքելով յուսադրում էին նոցա համբերել մի առժամանակ, մինչև որ Վրաստանից սայլեր հասնէր, ուր վաղ է վերջանում հունձը. թէպէտև նոցանից ոչ մի օգուտ չեղաւ, որովհետև նոքա հնձից յետ խմբովին իջնում էին Կողբի գաւառը աղ կտրելու։ Ուստի ովքեր կարող էին սայլեր վարձեցին ու դնացին, իսկ անկարողները մնացին։ Հայերից մօտ հազար վեց հարիւր չիսուն տուն, իսկ կաթոլիկներից հարիւր չիսուն տուն, ընդամենը մօտ հազար ութն հարիւր տուն կարկատած վրաններին տակ տարածուեցան ջրի հոսանքի ընդարձակութեամբ, ոօթից արևակէզ և անձրևից ողողուած։ Թէպէտ տէրութիւնը չէր դադարում հաց մատակարարել նոցա, աժան էր նմանապէս և ուտելիքը, սակայն դանդատներն ու բողոքները խիստ մեծացան, սոխ ու սխտորի և Եգիպտոսի պտուղների չիշատակը նորոգուեցաւ, պաուաւների անէծքներն ու դժչիւնը, որոնց հետևեցան և շատ նախատինքներ ու լուտանք, Մոսկուայի երկայնմտութիւն էր հարկաւոր մարդկեղէն անհամբերութիւնը անվրդով տանելու և միևնոյն ժամանակ նոցա մխիթարելու ու սփոփելու։

Այս օրերում, օգոստոսի 2-ին, հասաւ այդտեղ դաղթական ժողովրդի նոր վերակացու մայիոր Անօսովը, որին յանձնուած էր խնամք տանել Օսմանեան սահմաններից եկած բոլոր դաղթականներին, մինչև հասնեն իրանց տեղերը։ Նա շուտ շուտ այցելութիւն գնալով բանակին և քննելով ժողովրդի բոլոր պէտքերը՝ պատուիրեց ամենքին, որ ազատ կերպով ամեն մէկը իր համար տեղ ընտրէ ուսուաց իշխանութեան մէջ ուր և կամենայ։ Երկու հարիւր տան չափ գրուեցան Փամբակ գնալու համար, որոնք քիչ քիչ ոմանք սայլերով և ոմանք եղներով ու գրաստներով հասան իրանց տեղերը, և ոմանք գետեղուեցան մօտակայ գիւղերը, որ այնտեղ ձմեռը հանդստանան, մինչև քաղաքը կշինուէր. իսկ գարնանը պէտք է ժողովուէին քաղաքում մշտական բնակութիւն հաստատելու համար։

Պասկևիչ ոպարապետը բաւական չը համարելով այդ ամենը, որ մանրամասնաբար գիտէր ինքը, ուղարկեց նոր դաղթականների կառավարութեան համար ոահմանած խորհրդականներից մէկին՝ այն է Սերովբէ արքեպիսկոպոսին, այցելութիւն նորեկ ժողովրդին, անձամբ գննելու նոցա բոլոր պիտոյքները և իրան տեղեկութիւն տալու։ Սերովբէն սկսաւ շրջել բոլոր ժողովրդի մէջ, սկսած Փամբակի կողմերից, ուր կարսեցիքն էին բնակուում, մինչև Ղիւմրի, և գննելով ժողովրդի մնացած մասն էլ, եկաւ հասաւ Սիսլեխա օգոստոսի 22-ին. երբ այնտեղ հասաւ՝ տեսաւ, որ երկրի կառավարութիւնը խառնափնդոր և կրնճռոտած էր՝ հացի կարօտութեան, տների սակաւութեան, և ամենից աւելի հրամանատարի և նորեկ ժողովրդի մէջ եղած անհամաձայնութեան պատճառով նոր քաղաքի շինութեան առթիւ։ Վասնզի Տրեշեռ հրամանատարը մնացել էր անշարժ և Պասկևիչի հրամանները չէր կատարում, հին քաղաքը թողնելու և նորի շինութեան ձեռնարկելու վերաբերութեամբ, ոչ ոքին չէր թողնում ոչ տուն շինել հին քաղաքում և ոչ կրպակ, որի պատճառով ժողովուրդը նեղութեան մէջ հեծում էր. և չէին իմանում թէ ինչ անեն։ Սերովբէ արքեպիսկոպոսը իրան տուած իշխանութեամբ հոգ տարաւ, հացի համար գանազան տեղեր մարդիկ ուղարկեց և բաւ՛ական ցորեն հաւաքեց ժողովրդի համար, իսկ կարօտեալներին արքունի ցորեն բաժանեց. այսպէս նաև անհրաժեշտ բնակարանների վերաբերեալ կարևոր բարեկարգութիւնները արեց և մի առ ժամանակ խեղճերը շունչ առան։ Իսկ քաղաքի շինութեան մասին շատ մտածելուց և խորհրդակցելուց յետոյ՝ նկատելով, որ ժողովուրդը դեռ չէր կարող նոր քաղաքի շինութեան ձեռնարկել, մինչև որ կանցնէին այն ձանր վնասները, որ մինչև այդ ժամանակ տուժեցին, և որովհետև սպարապետի պատուէրը ստիպողական չէր, հրամայեց կրպակներ կառուցանել, և ահա կարճ ժամանակի մէջ հարիւրաւոր կրպակներ շինուեցան, և ժողովրդի ձեռագործը փոքր առ փոքր սկսեց արդիւնք բերել։ Այս բոլորի մասին Սերովբէն դրեց Պասկեւիչին և Թիֆլիզ դտնուած կառավարութեան ատենին։

Այդ պատճառով քաղաքական կառավարիչ Կուռզենցկին ինքը եկաւ քննելու դաղթականութեան դրութիւնը, հոկտեմբերի 16-ին եկաւ Սիսլեխա քաղաքը, տեսաւ, հարց ու փորձ արաւ, քննեց, ամեն բան իմացաւ և ընդունեց բոլոր ժողովրդի թէ եկաւորների և թէ բնիկների խնդիրները։ Այնուհետև հոկտեմբերի 23-ին հանդէս կազմեց նոր քաղաքի հիմնարկութեան, որից հետ նաև հայոց, կաթոլիկաց և ուսուաց եկեղեցիների հիմնարկութեանց, որ դիպող ժամանակին կառուցուին. և ընդունեց այնտեղ ժողովրդի հնազանդութեան և հաւատարմութեան երդումը։ Այդ ժամանակ Սերովբէ արքեպիսկոպոսը հայերէն լեզուով ատենաբանութիւն արեց, իրրև գոհութիւն առ Աստուած ժողովրդի բարեբախտութեան համար, և քաջալերեց նոցա չվհատուել առժամանակեայ մի վնասքը նեղութիւններից։ Նորանից յետոյ անառնաբանեց Թուրքերէն լեզուով Հ. Եփրեմ, որ կաթոլիկների վարդապետն էր, առաջ բերելով հայոց ազգի երբեմն ազէտներն ու այժմեան մխիթարութիւնը։ Երրորդը քարոզեց վրացիների աւագերէցը գոհաբանութիւն վերառաքելով առ Աստուած։

Այդ օրը խնջոյք արեց բոլոր ժողովուրդը։ Այնուհետև Կուռզենցկին սահման դրեց, նոր ժողովուրդը հնից անջատելու համար. և նոցա վերակացու նշանակեց Զիլայովին, որ առաջ էլ ժողովրդի կառավարութեան օգնում էր։

Գ՛—ա Հ. Աշտարակեցի

ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ՀԱՄԲՈՅՐ

(Տես պատկեր երես 181)։

Ոչինչ այնքատ պերճախօս չէ որքան չ-ու-ն-ը, երբ այդ լուսաթեան տակ զգացմունքն է խօսում։ Արդարև, ինչ խօսքով, ճարտասանութեան ո՞ր կանոնով, ո՞ր գեղարական ածականով արտայայտես այն, որ ամբողջ էութիւնդ յուզում է, այն անասելի երանութիւնը, որով համակուած ես հոգիդ, երբ ամենաքնքուշ սիրով սիրած առարկադ քեզ զրկած համբոյր է տալիս, համբոյր է առնում։

Այդ զգացմունքը իւր գաղաթնակէտին է հասնում մօր դէպի զաւակը տածած սիրոյ մէջ։ Մեր նկարիչը ահա այդ սէրն է արտայայտել։ Թէ որքան անհուն, անսահման է դա, թող վկայէ հուչակաւոր գիտնական-մարդաբան Պաօլօ Մանտիգացցա։ Ահա նորա խօսքերը.

« Կինը միշտ մայր է, նոյն իսկ դեռ
« աղջիկ մի[ջ]ոցին։ Իւր սիրած ամեն մի իր,
« ամեն մի արարած նա «էրէխա» է կան-
« չում։ Մանուկ հասակում նորա պուպ-
« րիկը (տիկնիկ), նորա եղբայրը, այնու-
« հետ աբբունքի մէջ նորա առաջին սի-
« րածը—այդ ամենը նորա երեխան է....

« .... Ոչ մի օրինագիրք՝ ոչ Աստուածային և ոչ մարդկային, երբէք կարիք չէ ունեցել պատուիրել կնոջը իւր զաւակը սիրել»։ *)

Այդ մօր և զաւակի վսեմագարձ համբոյրի մէջ մի բուռն զգացմունք, մի հիացում, մի յափշտակութիւն կայ, մի երանութիւն, որի ճնշող յուզման ներքոյ վեզուն լռում ու աչքերը գրեթէ փակվում են։ Հոգեբանական այս սքանչելի րոպէն անզուգական ճշտութեամբ արտայայտել է նկարիչը։

Յ. Լ.

*) Paolo Mantegazza ‹Le Estasi umane›

ՋԱՆԱՋԱՆ

ՏԻԿԻՆ ԶԵԼԳՕՆ, ՋՕՆ ՎԵՍԼԻ ԵՒ ՏԻԿԻՆ ՈՒԻԼԿԻ

Ամերիկան մեծ հանգիստով ճանապարհ դրեց իւր առաջին կին ճանապարհորդին, որ ուղևորւում է դէպի Աֆրիկայի խորքերը։ Չէնց որ լուր տարածուեցաւ թէ՝ մի կին կամենում է ալոյեան հանգիստանալ Ստենլիին և մրցելով նրա հետ մենամենակ ճանապարհորդել դէպի թանձր խաւարով պատած Աֆրիկայի խորքերը, միաբերան սկսեց ծաղրել նրան թէ ամերիկան և թէ անգլիական մամուլը։ — Ոչ ոք չէր ուզում հաւատալ, թէ կարող է գտնուել մի կին, որ այդքան արիւթիւն և համարձակութիւն ունենայ. բայց վերջը պարզուեց, որ այդ միանգամայն լուրջ բան է եղել։ — Տիկին Զելգօնը արդէն ճանապարհ ընկաւ. իսկ լրագրապետները վոխելով իրանց լեզուն, սկսել են վառաբանել օրիորդ Ստենլիի՝ ինչպէս այժմ սկսել են անուանել նրան — ապազայ յաջողութիւնները։ Ճանապարհ ընկնելով Նիւ-Եօրկից և մի քանի օր մնալով Լօնդօնում, նա իւր ամուսնու հետ, որ անգլօ-ամերիկական հրապարակախօս է, գնաց Նիւտոլիս և ապա Բրինդիզի, որտեղից նա միայնակ նաւով կուզևորուի Զանզիբար։ Ընդելով, որ բազմաթիւ դիտնականներ, բժիշկներ և ճանարհորդութիւն սիրողներ առաջարկում էին իրանց ծառայութիւնը նրան ուղեկցելու համար, սակայն տիկ. Զելգօնը նախապատիւ համարեց այդ ճանապարհորդութիւնը, որ նա անում է սեփական ծախսով և իւր պատասխանատուութեամբ, կատարել միայնակ իւր պառաւ վորձուած աղախնի հետ, որ առաջ էլ եղել է Աֆրիկայում։ Ճանապարհի համար անհրաժեշտ եղած ծառաները և պահապանները, մօտ չիսուն հոգի, երկու սեռից էլ, նա կը վարձի Զանզիբարում։ Իւր այս համարձակ քայլի նպատակի մասին՝ տիկ. Զելգօնը ասաց մի անգլիացի լրագրտիրոջ. «Ես գընում եմ Աֆրիկա ոչ միսիոնարական, ոչ մարդասիրական, ոչ առևտրական և ոչ էլ աշխարհագրական նպատակներով, այլ թէ ինձ ուղղակի հետաքրքրում է վայրենի ցեղերի նախնի՝ նահապետական կեանքը. մի քանի տարուց յետոյ, երբ զանազան ուղղութիւններով ճանապարհները կը բանան Աֆրիկայի մէջ, այդ ժամանակ կանդատանան նրա մէջ եղած բոլոր հետաքրքրութեան արժանի բաները և այնտեղ կրսկսեն ճանապարհորդել այնպէս, ինչպէս այժմ ճանապարհորդում են Զուիցերիայում։ Քանբասում ամեն ինչ կարգի բերելուց յետոյ, ես կուզևորուեմ դէպի Կիլիմաջօրա լեռը, որտեղ տակաւին ոտք չի դրել ոչ մի սպիտակամորթ կին և այնտեղ կրսկսեմ ուսումնասիրել տեղացիների ընտանեկան կեանքը։ — Այդ տեղ կրսորոշեմ իմ ապագայ ճանապարհը, բայց ոչ Ստենլիի լսիտ անտառը և ոչ էլ հեռաւոր անապատները մտնելու ես միտք չունեմ, որովհետև իմ նպատակս է նիւթեր ժողովել սկսածս աշխատութեան համար և որքան կարելի է շատ տեղեկութիւններ հաւաքել զանազան վայրենի ցեղերի կեանքից»։ — Ընդհանրապէս տիկ. Զելգօնը շատ է մտածում իւր ճապարհորդութեան յարմարութիւնների մասին. 'ի միջի այլոց նա պատուիրել է պատրաստել մի բազկաթոռ, որի վրայ նստած կրտանեն նրան չորս մարդ և որը դիշերները կրծառայի նրան իբրև մահճակալ։ — Ստենլին և Աֆրիկայում ճանապարհորդած ուրիշ շատ ճանապարհորդներ օգնեցին նրան իրանց խորհուրդներով և միանգամայն վստահ են, որ այդ ճանապարհորդութիւնը յաջող ելք կունենայ, մանաւանդ այդ նրա առաջին ճանապարհորդութիւնը չէ, այլ թէ նա ճանապարհորդած է Ամերիկայում, Եւրոպայում և Եգիպտոսում։ Առաջին կին ճանապարհորդի համար, որ յանձն է առնում ճանապարհորդել Աֆրիկայի խորքերում, 'ի հարկ է մեծ խնդիր է ղեռևս հարցը. տիկին Զելգօնը մերժելով իրան առաջարկած բազմաթիւ

տղամարդի և կիսատղամարդի զգեստները, վերցրեց իւր հետ սովորական կանացի զգեստներ, 'ի միջի այլոց և մի քանի հատ այն հանդերձեղէններից, որ կանայք գործ են ածում որս գնալու ժամանակ, ամենահետաքրքիրը նրա հագուստների մէջ անկասկած այն երկարավիզ կօշիկներն են, որ պատրաստել է տուել կակուղ կաշուից և որից նա միտք չունի բաժանուելու իւր ճանապարհորդութեան ժամակամիջոցում: Միանգամայն վստահ լինելով, որ իւր ճանապարհորդութիւնը յաջող ելք կունենայ և կէս տարուց աւել չի տևիլ, նա Լօնդօնում իրեն ճանապարհ ղցող բազմամարդ խմբին ասաց՝ «տղամարդիկ շրջել են Աֆրիկան և ցոյց են տուել, թէ ինչ բանի են նրանք ընդունակ. այժմ հերթը մերն է, և մենք կանայքս պիտի ապացուցանենք, որ միևնոյնը և մենք կարող ենք անել, դեռ մի բան էլ աւելի»:

Մարտի 2-ին ամբողջ անգլիան, գլխաւորապէս Լօնդօնը, տօնեց Ջօն Վեսլէի 100—ամեայ յոբելեանը, որը հիմնեց կարգատենչիկների (MOTOCTЪ) ամենահզօր և բազմանդամ աղանդը անգլիայում: Անգլիայում, անցեալ տարուայ ընթացքում հասարակական բարոյական կեանքը, ըստ Ձերարի, որ այնքան ցած աստիճանի վերայ էր գտնւում, այժմ շնորհիւ այդ առաքեալի քարոզներից առաջացած կրօնական շարժողութիւններին, բաւականին փոփոխուեց ներքին կեանքի կազմակերպութիւնը: Ջօն-Վեսլէին՝ որ մի անգլիացի պաստորի որդի է, իւր կրթութիւնը ստացել է Օկսֆօրդի համալսարանում: Դեռևս երիտասարդ հասակում, նա իւր եղբօր հետ միասին, Օկսֆօրդում հիմնեց մի ժողով՝ հաւաքուել աղօթելու և մարդասիրական գործողութիւններ կատարելու նպատակով, որ երկար ժամանակ անյայտ մնաց Անգլիայում: Այդ ժողովին երգիծաբանական կերպով կոչում էին «Հոգևոր ժողովարան», իսկ իրանց անդամները անուանում էին կարգատենչիկներ՝ Ներոնի ժամանակ Հռոմում գոյութիւն ունեցող մի բժշկական ուսումնարանի անունով, որ բոլոր հիւանդութիւններն առողջացնում էին կանոնաւոր սննդով: Քարոյական կանոնների ճիշտ գործադրութիւնը հիմք դնելով իւր ուսուցման, Վեսլէն վերադարձաւ Ամերիկայից, ուր նա գնացել էր միսիօնարական նպատակով, և սկսեց իւր հոգևոր պրոպագանդան Անգլիայում, Շոտլանդիայում և Իրլանդիայում: Նա այն ժամանակ 35 տարեկան էր և դրանից յետոյ իւր 50-ամեայ կեանքի ընթացքում նիւթական միջոցների սղութեան պատճառով, ոտքով անցաւ աւելի քան 200,000 մղոն տարածութիւն, նա արտասանեց 40,000 քարոզ, յաճախ մի օրուայ ընթացքում 4 անգամ: Նա ձգտում էր, որ իւր հալրենակիցները լինին ոչ միայն մոլեռանդ քրիստոնեայ, այլ և բարոյական և մարդասէր մարդիկ:

Նա կենդանի օրինակով սովրեցնում էր մարդոց այցելել անտէր հիւանդներին և բանտարկեալներին, հիմնել երեխաների համար ուսումնարաններ, իսկ խեղճերի և անօգնականների համար ապաստարաններ, միով բանիւ նա թէ խօսքով և թէ գործով ցոյց էր տալիս, թէ ինչ պարտականութիւններ կան դրուած մի հասարակական բարեգործի վրայ:—Ընայած որ նրան ամեն տեղ հալածում էին և այդ հալածանքը յաճախ հասնում էր հրապարակական հայհոյանքների, կատակի, անգամ և ծեծի, նա անվեհեր շարունակեց իւր սկսած գործը և հրաժեշտ տուեց երկրաւոր կեանքին համախմբուած ոչ թէ ատելութիւններով և կատակներով, այլ ընդհանուր համակրութեամբ: Նրա մահուան օրը, այսինքն Ճիշդ հարիւր տարի նրանից առաջ, կարգատենչիքների թիւը հասնում էր 120,000 հոգու, այն ինչ այժմ Անգլիայում նրանց թիւը 500,000 է, իսկ ամբողջ աշխարհում 35,000,000: Այդ յոբելեանին մասնակցեցին թէ անգլիական եկեղեցին և թէ Անգլիայում գոյութիւն ունեցող բազմաթիւ աղանդները և դրանով պարզ ապացուցանւում է թէ մինչև որ աստիճան տարածուել են Վեսլէի քարոզած մարդասիրական գաղափարները: Այդ մեծ մարդու յիշատակին ստորագրութեամբ ժողոված փողով, կառուցուած է մի փառաւոր արձան այն մատուռի առաջ, ուր նա յաճախ սովորութիւն ունէր քարոզելու:

Միևնոյն նպատակին, այսինքն ժողովրդի մէջ կրօնական զգացմունքներն արթուն պահելու և նրան դէպի մարդասիրական գործունէութիւն առաջ մղելու համար, որ Վեսլէի կեանքի և քարոզչութեան գլխաւոր նպատակն էր համարում, ձգտում է անցեալ տարուայ վերջում տիկին Ուարդի նախաձեռնութեամբ հիմնուած մի կրօնական—փիլիսոփայական ակումբ, որ կոչւում է «Unversity Hall»: Ինչպէս յայտնի է նրա «Ներածութեան» վերնագրով վերջին վէպը մեծ իրարանցումն պատճառեց Հասարակութեան մտքերում և ասպա նա այժմ սկսում է գործնական կերպով իրագործել իւր վէպի հերոս Բօբերտ Էլսմերի գաղափարները, որ նա մեծ յաջողութեամբ գլուխ է բերում: Նորա շուրջը խմբուել են մի քանի մարդիկ, որոնք մեծ աշխուժով օգնում են տիկնոջը իւր գործերում և այժմ ակմբի բնակարանում (ժողովատեղի), որ մի գեղեցիկ շինութիւն է, ապրում են 11 երիտասարդներ, որոնք իրանց նպատակ են դրել գործնական կերպով իրագործել — այդ Հաստատութեան գիտնական և ընկերական (սոսիալական) նախագծերը կիրակնօրեայ դասերին, որ խեղճերի համար է, հետևում են դասախօսութիւններ և զրուցատրութիւններ ակումբի անդամների մէջ, գանազան աստուածաբանական, փիլիսոփայական և հասարակական հարցերի վերաբերմամբ: Դասախօսութեանց մէջ մեծ յաջողութիւն ունեցաւ այն մասը, որ վերաբերում է Անգլիայի քաղաքների զարգացմանը: Այդ դասընթացն անցնում է տիկ. Ֆրինը, որ շատ լաւ ուսումնասիրել է այդ հարցը, որի համար նա արդէն ունի պատրաստի անտիպ մի աշխատութիւն: Թէ այդ դերքի, որ շուտ լոյս կընծայուի և թէ տիկ.

Գրինի դասախօսութեան գլխաւոր նպատակն է ապացուցանել, որ Անգղիայի քաղաքները հին դարերում վայելում էին կատարեալ անկախութիւն, ներկայացնում էին մի տեսակ թագաւորութիւն թագաւորութեան մէջ, սակայն XIX դարում այդ ազատութիւնը միանգամայն չքացաւ և հարկաւոր եղաւ պատերազմը նորից բսկսել։—Այդ ակումբի կրօնական և փիլիսոփայական ուղղութիւնն արտայայտւում է նրա հետևեալ նախաբանով՝ «Ծառայել մարդոց, կրնշանակի ծառայել Աստծուն», և նրա հիմնադրի խօսքերով, թէ մեր սեռունդի գլխաւոր նպատակը պիտի լինի վերականդնել այն հաւատոյ հոգին, որին բարոյական իդէալների զործադրութիւնն այժ է տալիս»։

Խմբագիր՝ ԱՒԳՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Տնօրէն՝ Ն. ՅԱՐՈՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիզի Հայոց Հրատարակչական ընկերութեան Հրատարակութեամբ լոյս տեսան Հետևեալ գրքոյկները.

1. Ե՛Հաննա Սպիրի «Վարդ—Էսլին», գերմ. *թարգ.* Ի. Յ. գինն է 10 կոպէկ։

2. Կոմս Լ. Տոլստոյի «Ստուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց գատաստանը շուտ չի անում», *թարգմ.* Մ. Ա. գինն է 7 կոպէկ։

3. Դ. Վալդնէրի «Հաւատարիմ Սավիտրին», հնդկական վէպ, գերմ. *թարգմանեց* Փ. Վարդանեան։ Գինն է 10 կոպէկ։

Վաճառվում են կենդրոնական գրավաճառանոցում։

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ-ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Բաժանորդագինն է 10 ֆր. (4 ռ—է կ)։

Հասցէն՝ Rédaction de la Revue „HANTESS“, a Vienne (Autriche) VII. Mechitharistengasse. 4.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ Ի ՄԻՋԻ ԱՅԼՈՑ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.

ԴԱՐԴԵԼԻ Յ., *ժամանակագրութիւն Հայոց*, գ. 1 ռ. 25 կ.
ԹՈՒՄԱՆԵԱՆ Ա., *Արբեցող և տաք սէր. պատկեր իրական կեանքից*, գ. 30 կոպ.
ԼԵՒԵՆՑ, *Բանաստեղծութիւններ*, գ. 60 կ.
ՄԵԼԻՔ-ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, *Հայ գիւղացու սէր օրը*, գ. 40 կ.
ՉԻԼԼԵՐ, *Աւազակներ, ողբերգութիւն, թարգ. Փ. Վարդանեանցի*, գ. 50 կ.
ՊՈՕՉԵԱՆՑ Պ., *Բզէ, վէպ.*, գ. 1 ռ. 20 կ.
ՍԱՐԳՍԵԱՆՑ Լ., *Այց Թիւրքաց Հայաստանին*, գ. 60 կ.
ՍՄԱՅԼՍ Ս., *Ինքնօգնութիւն. թարգ. Փ. Վարդանեանցի*, գ. 1 ռ. 50 կ.
ՐԱՓՓԻ, *Մինը այսպէս, միւսը այնպէս, պատկերազարդ վէպ*, գ. 1 ռ.
ՓԱՓԱԶԵԱՆՑ, *Խաթ—Սաբա* (*Հայ բոշաների կեանքից*), գ. 15 կ.

ВЕРИГА, Переплетчикъ. Полное практическое руководство къ переплетному дѣлу. ц. 1 р. 50 к.

ГАЛАНИНЪ, Письма къ матерямъ объ уходѣ за здоровымъ и больнымъ ребенкомъ. ц. 1 р. 75 к.

ГАРШИНЪ Всеволодъ, Разсказы т. I, II и III. ц. 3 р.

ГОШЕ, Руководство къ плодоводству для практиковъ, съ 700 политипажами 2 ч. ц. 12 р.

ЕЛАГИНЪ, Практическое птицеводство, Содерж. и разв. птицъ. ц. 2 р.

НЕТЫКСЪ, Практическій курсъ токарнаго искусства по дереву. ц. 1 р. 50 к.

СМАЙЛЬСЪ, Умъ и Энергія (жизнь и трудъ). Характеристики изъ жизни великихъ людей. ц. 1 р. 50 к.

Ձանապարհածախսը գնողների վրայ է։

Ոսկեայ մեդալ

ՆԻԿՈՂԱՅՈՍ
ԲՕԶԱՐՋԵԱՆԻ

Ոսկեայ մեդալ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻԶՈՒՄ

Առաջարկում եմ պ. պ. ցանկացողներին ընտիր ծխախոտն և պապիրոսները իմ գործարանի, որ ունի ֆաբրկական և տեղական ընտիր և թարմ ծխախոտների պաշար։ Պատուէրները կատարվում են գործածողների ճաշակի համեմատ և ճշտութեամբ։ Իմ մագազինում կան ծխելու համար ամենալաւ գործիքներ և առարկաներ։ Օտար քաղաքներից ստացուած պատուէրները կատարվում են անյապաղ։

Գործարանիս գլխաւոր մագազինը գտնվում է Դվօրցովայա փողոցում Թիֆլիզի ազնուականների բանկի, նախկին Արծրունու, քարվանսարայում։

25—28.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

վաճառվում են ի միջի այլոց հետևեալ

ՆՈՐ ԳՐՔԵՐԸ

ՍԵՎԱԿԵԱՆ, Ամուսնական խնդիրներ, գ. 1 ռ.
ՔԻՉՄԻՉԵԱՆՑ, Հոյսերի մեծարանքը, գ. 15 կ.
ՁՄԻՏՏ, Նալ և Պամայեանթիլ, գ. 20 կ.
ՀԱՅԶԼ, Նոնցալի բերդը, գ. 30 կ.
» Ճլաթրիչէ, գ. 30 կ.
ՏՕԼՍՏՈՅ, Ռոբինզոն, գ. 20 կ.
» Կոլումբ, գ. 15 կ.
ԼԵՐՄՈՆՏՈՎ, Դիմակահանդէս, գ. 50 կ.
ԲԱՒԹՐԵԱՆՑ, Հին Հայոց տաղաչափական արուեստը, գ. 50 կ.
ԼԷՕ, Փնտռտուքիւն «Դաւիթ և Մհերի», գ. 15 կ.
ՀԱՆԴԷՍ գրականական և պատմական, գիրք IV, գ. 2 ռ.
ՍՏՐՊԵՏԵԱՆ, Ջուշան. Օպերա, գ. 1 ռ.

ГЮЙО, Воспитаніе и наслѣдственность, соціологическій этюдъ. Ц. 1 р. 50 к.
„ Происхожденіе идеи времени. Психологическій этюдъ. Ц. 75 к.
„ Задачи современной эстетики Ц. 1 р.
ЛОККЪ, Мысли о воспитаніи. Ц. 1 р.
ИБЕРВЕГЪ-ГЕЙНЕ, Исторія новой философіи. Ц. 5 р.
ХОХРЯКОВЪ, Языкъ и психологія. Ц. 1 р. 50 к.
МАРТЭНЪ, О воспитаніи характера. Ц. 1 р. 50 к.

Ձանապարհածախսը գնողների վրայ է։

ՀԱՅԵՐԷՆ-ՌՈՒՍԵՐԷՆ

ԲԱՌԱՐԱՆ

Մամուլի տակ է և մօտաւորապէս եկող ամուսայ վերջին լոյս կը տեսնի վերոյիշեալ աշխատութիւնը։ ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔԸ *արդի աշխարհաբար լեզուով բառարանէ, բաղկացած կը լինի* 18—20 in 32⁰ *տպագրական թերթերից (576—640 երկսիւնեակ երես, մանր* № 8 *տառերով 43-ական տող ամեն մի սիւնակը)։ Բառարանի յառաջաբանը կը լինի Հայոց լեզուի քերականութեան համառօտ սկզբունքները։*

*Բաժանորդագրութիւնը (Թիֆլիսի կենդր. դրավաճ. և նորա գործակալների միջնորդութեամբ։ Թիֆլիսում մէկ րուբլի է, իսկ ճանապարհածախսը հետը 1 ր. 25 կ.։ Լոյս տեսնելուց յետոյ «*ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԸ*» *կ'արժէ երկու րուբլի։*

Այժմս դուրս է եկել 24 թերթ։ «ՀԱՅԵՐԷՆ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԸ» *աշխատասիրել է* ԿԱՐԱՊԵՏ ԵՂՈՒԱՐԴԵԱՆՑԸ, *մի քանի մասնագէտների օգնութեամբ։*

Բաժանորդագրութիւնը շարունակվում է

9

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА 1891 ГОДЪ

НА БОЛЬШУЮ ПОЛИТИЧЕСКУЮ, ЭКОНОМИЧЕСКУЮ и ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ

„ПРАВДА“

“ГАЗЕТА.. дѣлится на ТРИ большихъ вполнѣ самостоятельныхъ ОТДѢЛА: политико-экономическій, научный и литературный.

Подписчики газеты „ПРАВДА“ за 6 р. въ годъ получаютъ:

52 НОМЕРА ГАЗЕТЫ, **ЕЖЕНЕДѢЛЬНО**, каждый номеръ въ 2—4 и болѣе листовъ большаго формата въ 8—12 и болѣе страницъ и каждая страница изъ **трехъ** столбцовъ, такъ что въ одномъ номерѣ будетъ отъ 24 до 36 и болѣе столбцовъ сплошнаго текста убористой печати съ разнообразнѣйшими статьями. КРОМѢ ТОГО ВЗАМѢНЪ РАЗНЫХЪ ДЕШЕВЫХЪ ПРИЛОЖЕНІЙ

52 НОМЕРА отдѣльно отъ газеты, **ЕЖЕНЕДѢЛЬНО**, каждый въ ДВА и болѣе листовъ большаго формата въ 32 и болѣе столбцовъ убористой печати, содержащихъ цѣльный рядъ **новыхъ законченныхъ романовъ** выдающихся писателей, съ такимъ разсчетомъ, чтобы въ трехъ—пяти номерахъ помѣщался **только** одинъ сплошной романъ безъ всякихъ раздробленій. Такимъ образомъ подписчики получатъ:

Большую газету и цѣнную библіотеку избраннѣйшихъ романовъ.

Въ особомъ литературномъ отдѣлѣ уже напечатаны весьма цѣнныя новыя литературныя произведенія, заставившія о себѣ говорить всю Европу:

ПОДПИСНАЯ ЦѢНА съ доставк. и перес. { **за границу** въ **С.-ПБ.** и во всѣ мѣста **Имперіи** на г. 6 р., полг. 4 р., на 1 мѣс. 1 р., въ славянскія земли и во всѣ другія государства . . . 10 р., „ 6 р., „ „ „ 1 р.

NB. Выписывающіе 10 экземпляровъ получаютъ одинъ экземпляръ газеты безплатно.

Подп. прин. исключительно въ **главной конторѣ газеты „ПРАВДА“**, С.-Петербургъ, Невскій пр. 98.

Издатель-редакторъ газеты „Правда“ **И. Н. Подлигайловъ.**

„ՐՕՍԻԱ“

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՄԵԾ ՄՕՐՍԿԱՅԻՆ № 13.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ 11,000,000 ՐՈՒԲԼԻ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Շեղնոտու պայմաններով և ապահովողների մասնակցութեամբ ընկերութեան շահերին

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ

Ինչպէս առանձին անձինքների, նոյնպէս և հասարակական ապահովութիւն դործարաններում ծառայողների և բանուորների, — ապահովութեան վճարների կրճատումով դիվիդենդի շնորհիւ։

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՒԻ ԴԷՄ

Ամենայն տեսակ շարժական և անշարժ գոյքերի

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ

ԳԵՏՆԱՅԻՆ, ՅԱՄԲԱՔԱՅԻՆ ԵՒ ՇՈՎԱՅԻՆ.

Այն անձինքը, որոնք կամենում են ապահովել կամ դանազան տեղեկութիւններ ստանալ պէտք է դիմեն վարչութեանը Պետերբուրգում (Մեծ Մօրսկայա, № 13) կամ գործակալ Վ. Լ. Պօտկովին և Ե. Ֆ. Գօլդֆարբին Թիֆլիզում (Սօլօլակի փող. տուն իշխան Մելիքօվի, № 10). և կամ Կայսրութեան այլ քաղաքներում գտնուող գործակալներին։

Երկաթուղիներով և շոգենաւերի վրայ ճանապարհորդողներին դժբաղդ պատահարների դէմ ապահովելու տոմսակները կարելի է նոյնպէս ստանալ երկաթուղու կայարաններում, շոգենաւերի գրասենեակներում և [illegible] տանի քաղաքների գլխաւոր հիւրանոցներում։

Ամենայն տեսակ բրոշիւրներ տրվում են պահանջողներին ձրիաբար։ 21

Дозволено цензурою, Тифлисъ, 31 мая 1891 г.

Տպարան Յ. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца, Орб. ул., д. № 1—2